բատում։ Արեւելեան Հայաստանի ԺԲ. դարի եւ ԺԳ–ի առաջին կիսի նշանաւոր հեղինակների մեծագոյն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապուած. Յովհաննէս Սարկաւագ վարդապետի ընդարձակ եւ բազմապիսի գործունէութիւնը մատենագրական–գիտական–վարժապետական ասպարիզում այդ վարգացման բարձունքներից մէկն է կազմում. նորա աշակերտներն են Երեմիա Անձրեւիկ, Մաչատուր, Գրիգոր, Յովհաննէս եւ Սամուէլ Անեցիները(*), առաջինը իբրեւ վարժապետ Անիում եւ երկրորդը յայտնի ժամանակագիրը։ Նորա ժամանակակից վարդապետներն էին նոյն վանքում Դաւիթ Ալաւկայ որդի, «որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս եւ պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն». եւ Գրիգոր որդի Թոքակերի. վերջին երկուսը թղթակցում են Գրիգորիս Գ. Պահլաւունու հետ(*)։ ԺԲ. դարի վերջին եւ ԺԳ–ի առաջին քառորդներին Հաղբատում նշանաւոր էին Իգնատիոս «ուսմամբ հռչակեալ», Պետրոս, Վարդան եւ Դաւիթ վարդապետները(**)։ Թուցէ նոյն լինի այս Պետրոս վարդապետի հետ «ծեր ոմն Պետրոս սպասաւոր սբ. Նշանիս Հաղբատայ», որ «բաղձանաւք սիրոյս» Յովհաննէս կրօնաւոր քահանային գրել է տուել



(Պատկեր 12)

Դաւթի սահմանաց գիրքը «առ ի յուսումն մակացողաց» եւ ինքն էլ կազմել ՈՂԲ = 1243 թուին(***)։ Վարդանը Հաղբատեցին է, Շնորհալու ժամանակակիցը՝ հեղինակ Պատճառաց գրքի, որ հասել է մեզ, նորա Տիրացու եւ Յովսէփ աշակերտների արտագրութեամբ, ուսուցչի մահուանից յետոյ՝

(*) Սամուէլ Անեցի. հրատ. Էջմ. 128։ Վարդան, Մոսկուա. 1861, 159։

(*) Վարդան. 159։ Գանձ. 107, 188։

(**) Ընդհ. Էջմ. հրատ. 1865. 427 եւ Գանձ. 162։

(***) Ձեռ. Էջմ. N 1890|1747. 121բ։